



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИМЕНИ В. БРЮСОВА  
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ  
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ  
В. БРЮСОВА  
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

---

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ПЕДАГОГИКА И СОЦИАЛЬНЫЕ НАУКИ**

**PEDAGOGY AND SOCIAL SCIENCES**

**2(55)**

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆ - 2021**

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ՝ ՈՐՊԵՍ 3-ՐԴ  
ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

**ՍԻՐԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ**

*Հիմնաբառեր՝ փոխներթափանցում, համադրում, մասնակի համընկնող լեզվական երևույթներ, լեզվական ճանաչման ունակություն, ավտոմատացում, լեզվական վարժություններ*

Միջազգային հարաբերությունների շարունակական ընդլայնումը, տարբեր ազգերի և մշակույթների ներկայացուցիչների միջև հետզհետե խորացող հաղորդակցումը առաջնային է դարձրել օտար լեզուների տիրապետման կարևորությունը: Օտար լեզուների ուսուցման նպատակը ոչ միայն սովորողների լեզվահաղորդակցական հավելյալ գիտելիքի, կարողությունների և հմտությունների ձեռքբերումն է, այլ նաև նրանց լեզվական փորձի ընդլայնումն ու հարստացումը, ինչը կատարվում է յուրաքանչյուր նոր լեզվի ուսումնառության արդյունքում և ուղղորդված ճիշտ կիրառման պարագայում կարող է դյուրացնել նոր լեզուների յուրացման գործընթացը: Սույն հոդվածի շրջանակում անդրադառնում ենք ՀՀ բուհերում անգլերենի՝ որպես 3-րդ օտար լեզվի ուսուցման գործընթացին, երբ սովորողների մայրենին հայերենն է, 1-ին օտար լեզուն՝ ռուսերենը, իսկ 2-րդը՝ ֆրանսերենը: Եվ քանի որ այս դեպքում 2-րդ և 3-րդ օտար լեզուները՝ անգլերենն ու ֆրանսերենը, ունեն բազմաթիվ լեզվական նմանություններ, որոնք թե՛ դրական փոխադրման, թե՛ բացասական փոխներթափանցման պատճառ կարող են լինել, անգլերենի ուսուցման գործընթացում հատուկ ուշադրություն պետք է դարձվի այդ նմանություններին, իսկ ուսուցման գործընթացը կազմակերպվի՝ հաշվի առնելով որոշակի առանձնահատկություններ: Համապատասխանաբար, լեզվի յուրացման գործընթացն առավել արագ և արդյունավետ կազմակերպելու համար՝ կարևոր է ճիշտ ընտրված վարժությունների կիրառումը:

Ֆրանսերենից հետո անգլերենի արդյունավետ ուսուցման նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել նշված լեզուների միջև նմանությունները և տարբերությունները: Ֆրանսերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի ռոմանական լեզվախմբի լեզու է, որը սերում է

լատիներենից և կրում է գերմաներենի ու անգլերենի ազդեցությունը, իսկ անգլերենը նույն լեզվաընտանիքի գերմանական լեզվախմբի լեզու է, որն էլ ունի լատիներենի և ֆրանսերենի ազդեցությունն իր վրա: Ուստի, անգլերենն ու ֆրանսերենը, բացի այն, որ ունեն միևնույն այբուբենը, նաև աչքի են ընկնում մի շարք կոգնատներով և միանման քերականական կառույցներով: Հետևաբար, անգլերենի և ֆրանսերենի միջև համադրումներ կատարելը անգլերենի ուսուցման գործընթացի կազմակերպման համար էական անհրաժեշտություն է:

Լեզուների համադրումները կարող են լինել աննկատ և բացահայտ: Աննկատ համադրումը դասավանդողի կողմից լեզվական երևույթների համեմատական/հակադրական վերլուծության կանխավ կատարված աշխատանքն է, որի նպատակն է պարզել տիպական դժվարությունները և կառուցել դրանց հաղթահարմանն ուղղված վարժությունների համակարգը, ինչպես նաև նյութի բացատրման հնարներ մշակել: Համադրման այս աննկատ տեսակը երկար ժամանակ լեզուների դասավանդման մեթոդիկայում համարվում էր առաջնահերթ: Իսկ բացահայտ համեմատություններին դիմում էին միայն որոշ դեպքերում՝ մայրենի և տարբեր օտար լեզուներում մտքի արտահայտման միջոցների տարբերությունը սովորողներին ցուցադրելու նպատակով: Բացահայտ համադրումը իրականացվում է դասավանդողի կողմից սովորողի համար ակնառու բացատրության ձևով (Шепилова 2005: 140):

3-րդ օտար լեզվի ուսուցումը շատ ընդհանրություններ ունի 2-րդ օտար լեզվի ուսուցման գործընթացի հետ, սակայն կան նաև էական տարբերություններ (Jessner 2007): 3-րդ օտար լեզվի ուսուցման ժամանակ կարելի է դիմել ինչպես աննկատ, այնպես էլ բացահայտ համադրումներին: Ավելին, բացահայտ համադրումները կարող են նախաձեռնել հենց սովորողները դասավանդողի ուղղորդմամբ: Շատ կարևոր է սովորողների գիտակցական մասնակցությունը լեզվական երևույթների համադրման գործընթացում, քանի որ շատ հաճախ օտար լեզվի որոշ երևույթներ դժվար է տարբերել մայրենի կամ այլ օտար լեզուների համահարաբերականներից, ինչն էլ անցանկալի փոխներթափանցման պատճառ կարող է հանդիսանալ:

Անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ սովորողների կողմից նախկինում յուրացված լեզուների համադրումը նպաստում է 3-րդ օտար լեզվի առաձնահատկությունների առավել լավ ըմբռնմանը՝ ի համեմատություն մայրենի, 1-ին և/կամ 2-րդ օտար լեզուների: Ժամանակի ընթացքում սովորողները գիտակցում են նոր լեզվական համակարգի կառուցման օրենքները, նրանց մոտ ձևավորվում է յուրահատուկ լեզվազգացողություն: Հետզհետե տեղի է ունենում 3-րդ լեզվի վրա մինչ

այդ ուսումնասիրված լեզուների ազդեցությունների թուլացում, հետևաբար նաև տարբերակման անհրաժեշտության նվազում:

Համադրումը անչափ կարևոր է նոր լեզվական երևույթների հետ ծանոթացման, պատկերացումների ձևավորման և նախնական կարողությունների ձևավորման փուլում: Այս փուլում կարելի է կիրառել երկլեզու վարժություններ, ընդ որում ոչ միայն հայերեն-անգլերեն, այլ նաև ռուսերեն-անգլերեն, ֆրանսերեն-անգլերեն զուգակցումներով: Հետագայում՝ լեզվական երևույթի կիրառմանն ուղղված աշխատանքի փուլում, արդեն ցանկալի է երկլեզու վարժությունների փոխարեն կիրառել միալեզու վարժություններ, քանի որ վերջիններս կարագացնեն նոր լեզվական երևույթի կիրառմանն ուղղված գործընթացը: Այս պարագայում կարևոր է աուտենտիկ նյութերի կիրառմամբ վարժանքը՝ հնարավորինս իրական հաղորդակցական միջավայր ստեղծելով: Լեզուների առավելագույնս մեկուսացումը, յուրացնողի ընկղմումը տվյալ լեզվի մեջ ավելի կարևոր է այս փուլում, քանի որ այն սովորողի մոտ ձևավորում է նոր լեզվական համակարգ անցում կատարելու հմտություն (Щерилова 2005: 141):

Ցանկալի է համադրումները կատարել՝ տարբերակված մոտեցում ցուցաբերելով լեզվի առանձին կողմերին՝ քերականությանը, բառապաշարին, հնչյունաբանությանը:

*Քերականության* ուսուցման ընթացքում առավել նպատակահարմար են բացահայտ համադրումները: *Բառապաշարի* ոլորտում համադրումների դերը նշանակալի է ուսուցման նախնական փուլում, բայց կարող է հետզհետե նվազել: Իսկ *հնչյունաբանության* դեպքում չափազանց կարևոր է միայն կանխավ կատարված համադրական վերլուծությունը, որը դասավանդողը նախաձեռնում է հավանական դժվարությունների «գոտիները» պարզելու համար: Այդ վերլուծությունը նաև հնարավորություն է ընձեռում նրան պլանավորել սովորողների հնչյունաբանական փոխներթափանցումների հաղթահարմանն ուղղված աշխատանքը: Իսկ հնչյունաբանական բացահայտ համադրումներն արտասանական հմտությունների զարգացման գործընթացում նպատակահարմար են, միայն եթե առկա են հնչյունական ուժեղ փոխներթափանցման դեպքեր կամ սովորողն ունի հնչյունական զգայունակության ցածր մակարդակ և չի կարող ինքնուրույն տարբերակել հնչյուններն իր իմացած և նոր յուրացվող լեզուներում: Այս պարագայում անհրաժեշտ է սովորողին բացատրել հնչյունի արտաբերման առանձնահատկությունները՝ բացահայտելով արտասանական դժվարությունները և մի շարք վարժությունների միջոցով ձևավորելով արտասանական ճիշտ հմտություններ: Իսկ հնչյունի ճիշտ

արտաբերման ավտոմատացման հետագա աշխատանքը պետք է ընթանա այլ վարժությունների միջոցով, սակայն համադրումների բացառմամբ (Цепилова 2005: 141):

Այսպիսով՝ 3-րդ օտար լեզվի ուսուցման գործընթացում մեծ դեր է խաղում սովորողների գիտակցական լեզվական ճանաչման ունակության ակտիվացումը: Օրինակ՝ 1-ին օտար լեզվի քերականության ուսումնասիրությունը սովորաբար դանդաղ է ընթանում, քանի որ հաղթահարվում են սխալ պատկերացումները: Քերականական երևույթների մասին համապատասխան իմացություն ձևավորելու համար անհրաժեշտ է ճիշտ պատկերացում ունենալ քերականական կարգերի մասին, հատկապես եթե մայրենի լեզվից էլ այդ գիտելիքների բաց կա: Իսկ արդեն 2-րդ օտար լեզվի յուրացման գործընթացում այդ դժվարություններն ավելի արագ են հաղթահարվում, քանի որ սովորողն արդեն պատկերացում ունի քերականական կարգերի, դրանց նշանակության, դերի, ինչպես նաև դրսևորման ձևերի մասին: (Цепилова 2005: 135-137):

Այսպիսով՝ 3-րդ օտար լեզվի ուսուցման պարագայում լեզուների ուսումնասիրման նախկին փորձի հաշվին ուսուցման գործընթացն ավելի ինտենսիվ է դառնում, որոշ գործողություններ և աշխատանքներ արագանում են կամ ընդհանրապես դուրս մղվում, քանի որ շատ հմտություններ սովորողների մոտ արդեն իսկ ձևավորված են և դրանց վրա լրացուցիչ ժամանակ և էներգիա ծախսելու անհրաժեշտություն արդեն չկա: Այս պարագայում վերանայվում է վարժությունների ուղղվածությունը. կարող է կրճատվել նաև դրանց քանակը, սակայն անպայմանորեն պետք է ավելանան այնպիսի վարժությունները, որոնք ուղղված կլինեն մասնավորապես այն լեզվական երևույթների հիմնավոր յուրացմանը, որոնք առկա են մայրենի, 1-ին և հատկապես 2-րդ օտար լեզվում, սակայն չեն համընկնում 3-րդ օտար լեզվի հետ, ուստի կարող են դառնալ անցանկալի բացասական փոխներթափանցման պատճառ:

Այս տեսանկյունից մենք համեմատական վերլուծությամբ անգլերեն և ֆրանսերեն լեզուներում առանձնացրել ենք հետևյալ լեզվական երևույթները. *լիովին համընկնող*, որոնք հեշտ են ընկալման տեսանկյունից և հաճախ կարող են փոխադրվել մի լեզվի մյուսը առանց հատուկ ջանքերի, *չհամընկնող երևույթներ*, որոնք դժվար են յուրացման տեսանկյունից, բայց լավ յուրացվելուց հետո կարող են մտապահվել և փոխներթափանցման պատճառ չդառնալ, և ամենավտանգավոր տեսակը՝ *մասնակի համընկնող երևույթներ*, որոնք հենց բացասական փոխներթափանցման պատճառ են հանդիսանում և հատուկ ուշադրություն և աշխատանք են պահանջում:

Մենք կներկայացնենք վարժությունների մի քանի օրինակ հենց այս լեզվական երևույթների հետ աշխատանքի համար:

Վարժությունները հիմնականում կիրառվում են լեզվական երևույթների ամրապնդման և մտապահման նպատակով, դրանք սովորաբար վերահսկվում և ուղղորդվում են դասավանդողի կողմից (Dagnell 2017): Տարբեր վարժությունների կիրառումը նպաստում է սովորողների կողմից լեզվական երևույթների շարունակական կիրառմանը տարբեր ձևաչափերով, տարբեր համատեքստերում՝ բացառելով նրանց մոտ ձանձրույթի զգացողության առաջացումը: Ցանկալի է կիրառել այնպիսի վարժություններ, որոնք միևնույն ժամանակ կգարգացնեն նաև խոսքային գործունեության տարբեր տեսակները՝ ունկնդրելը, գրելը, ընթերցելը և խոսելը:

Անգլերենի՝ որպես 3-րդ օտար լեզվի ուսուցման ժամանակ կարելի է կիրառել հետևյալ վարժությունների տեսակները՝ *համապատասխանեցում, բազմակի ընտրություն, բաց թողնված հարվածների լրացում, բառակազմություն, հոմանիշ/հականիշ, ավելորդ բառի/հնչյունի որոնում, նախադասության անդամների ճիշտ հերթագայության որոշում, դասակարգում, խաչբառ, քերականական/բառապաշարային «աճուրդ», երկխոսությունների կազմում/լրացում, մրցի շարունակություն, թարգմանություն* և այլն:

Ներկայացնենք սովորողների բառապաշարային, քերականական և հնչյունաբանական կոմպետենցիաների զարգացմանն ուղղված նպատակահարմար վարժությունների որոշ օրինակներ:

**• Բառապաշարային վարժություններ**

Համադրելով անգլերենն ու ֆրանսերենը՝ բացահայտված վտանգավոր մասնակի համընկնող լեզվական երևույթներից առանձնացրել ենք այն բառերը, որոնք միանման լինելով 2 լեզուներում, ունեն տարբեր իմաստներ և անցանկալի փոխներթափանցման աղբյուր են: Դրանք, այսպես կոչված, «կեղծ ընկերներն» են, ինչպես օրինակ՝ անգլերեն – eventually (ի վերջո) և ֆրանսերեն éventuellement (հավանաբար): Հաճախ հանդիպող որոշ օրինակներ ներկայացված են Աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1**

Անգլերեն բառը		Ֆրանսերեն համարժեքը		Ֆրանսերեն «կեղծ ընկերը»
eventually (ի վերջո)	=	finalement	≠	éventuellement (=անգլերեն՝ possibly - հավանաբար)
habit	=	habitude	≠	habit

(սովորություն)				(=անգլերեն՝ dress, clothes - հագուստ)
medicine (դեղորայք)	=	médicament	≠	médecin (=անգլերեն՝ doctor – բժիշկ)
photograph (լուսանկար)	=	photographie	≠	photographe (=անգլերեն՝ photographer - լուսանկարիչ)
phrase (արտահայտություն)	=	expression	≠	phrase (=անգլերեն՝ sentence- նախադասություն)
sensible (խելամիտ)	=	raisonnable	≠	sensible (=անգլերեն՝ sensitive - զգայուն )
sympathetic (կարեկցող)	=	compatissant	≠	sympathique (անգլերենում՝ nice, friendly - համակրելի)

Այս դեպքում սովորողներին կարելի է առաջարկել անգլերեն-ֆրանսերեն և ոչ թե անգլերեն-հայերեն երկլեզու համապատասխանեցման վարժություն, ինչպես օրինակ.

**Համապատասխանեցրեք անգլերեն բառը ֆրանսերեն համարժեքին և մեկնաբանեք** (Աղյուսակ 2):

**Աղյուսակ 2**

	ENGLISH WORD (ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՐԸ)		FRENCH EQUIVALENT (ՖՐԱՆՍԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔԸ)
1.	eventually	a.	photographie
2.	dress	b.	expression
3.	habit	c.	médecin
4.	possibly	d.	phrase
5.	medicine	e.	raisonnable
6.	doctor	f.	habitude
7.	photograph	g.	éventuellement
8.	photographer	h.	finalement
9.	phrase	i.	médicament
10.	sentence	j.	compatissant
11.	sensible	k.	habit
12.	sensitive	l.	photographe
13.	sympathetic	m.	sensible

Ի լրումն «կեղծ ընկերների»՝ ֆրանսերեն և անգլերեն լեզուների համեմատությունը ի հայտ է բերում մի շարք հետաքրքիր լեզվական առանձնահատկություններ, որոնք նույնպես կարելի է հաշվի առնել

վարժություններ կազմելիս, ինչպես օրինակ բարդ բառեր կազմելու արմատների տարբերությունները (տես՝ Աղյուսակ 3):

**Աղյուսակ 3**

Ֆրանսերեն բառը		Անգլերեն համարժեքը		Առանձնահատկությունը
petit-enfant (m) (թոռ)	=	grandchild	*	Երկու լեզվում էլ առկա է բարդ գոյական, սակայն ֆրանսերենում կիրառվում է բառակազմական «փոքր» արմատը, իսկ անգլերենում դրա հակահիշը՝ «մեծ»-ը:
belle-mère (f) (սկեսուր, զոքանչ)	=	mother-in-law	*	Անգլերենում ամուսնու/կնոջ բարեկամներին առնչվող բառերը կազմելիս օգտագործվում է «law» («օրենք») արմատը, մինչդեռ ֆրանսերենում՝ «belle» («գեղեցիկ») արմատը, ինչը սոցիալ-մշակութային հետաքրքիր առանձնահատկություն է:
belle-fille (f) (հարս, խորթ աղջիկ)	≈	daughter-in-law (հարս), stepdaughter (խորթ աղջիկ)	*	*Ի տարբերություն անգլերենի, որում նշված բառերի միջև հստակ տարանջատում կա, ֆրանսերենում միևնույն բառն է օգտագործվում նշված 2 տարբեր հասկացությունների փոխարեն (Ghazaryan 2018: 308):

Այս դեպքում սովորողներին կարելի է առաջարկել բառակազմական վարժություն, ինչպես օրինակ.

**Տրված բառերից կազմեք նոր բարդ բառեր՝** *child, in, nice, mother, law, daughter, grand, law, in, little...*

**•Քերականական վարժություններ**



Քերականության ոլորտում «վտանգավոր» մասնակի համընկնող կառույցներից կարող ենք առանձնացնել.

- ❖ Ֆրանսերենի «avoir» (ունենալ) և «être» (լինել) օժանդակ բայերը, որոնք որոշ դեպքերում ոչ համարժեք գործածություն ունեն անգլերենում:

*Օրինակ՝*

- Քանի՞ տարեկան ես: - Ես 20 տարեկան եմ:

Անգլերենում՝ - How old **are** you? -I'**m** 20 years old. («լինել» օժանդակ բայով, ինչպես հայերենում)

Ֆրանսերենում՝ - Quel age **as** - tu? - J'**ai** 20 ans («ունենալ» օժանդակ բայով):

- ❖ Անգլերենում «**neither...nor**» (ոչ...ոչ) և դրան համապատասխանող ֆրանսերենի «**ni....ni**» կառույցի մասնակի առկայությունը: Ֆրանսերենում, ի տարբերություն անգլերենի, առկա է կրկնակի ժխտում, ինչը բնորոշ է նաև հայերենին՝ հետևաբար անգլերենի՝ որպես 3-րդ օտար լեզվի ուսուցման գործընթացում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այս փոխներթափանցման հավանականության տեսանկյունից խիստ կարևոր լեզվական երևույթին:

*Օրինակ՝*

Ես չունեմ ոչ քույր, ոչ եղբայր:

Անգլերենում՝ I have **neither** sister **nor** brother.

Ֆրանսերենում՝ Je n'**ai ni** frère, **ni** sœur.

- ❖ Որոշի դիրքը: Անգլերենում հիմնականում որոշիչը նախադաս է, ինչը բնորոշ է նաև հայերենին և ռուսերենին, սակայն ֆրանսերենում մեծամասամբ այն հետադաս է, ուստի ֆրանսերենից հետո անգլերեն սովորողները հավանական է կատարեն սխալներ (տես՝ Աղյուսակ 4):

#### Աղյուսակ 4

Ֆրանսերեն բառը		Անգլերեն համարժեքը		Առանձնահատկությունը
famille (f) nucléaire	=	nuclear family	*	Անգլերեն արտահայտությունը նման է ֆրանսերենին, սակայն տարբերվում է գրելաձևով և որոշի տեղով:

Քերականական վերոնշյալ երևույթների ներմուծման և ամրապնդման համար սովորողներին կարելի է առաջարկել հետևյալ

վարժությունները՝ բազմակի ընտրություն, քերականական «ածուրդ», երկխոսությունների լրացում/կազմում և այլն:

**• Հնչյունաբանական վարժություններ**

Հնչյունաբանության ոլորտում նույնպես անգլերենի և ֆրանսերենի միջև կան տարբերություններ, որոնք կարող են սխալների պատճառ հանդիսանալ: Ստորև ներկայացված են անգլերեն հնչյունների և ֆրանսերենի ազդեցությամբ կանխատեսվող հավանական սխալների որոշ օրինակներ (տես՝ Աղյուսակ 5):

**Աղյուսակ 5**

<b>Անգլերեն հնչյունը</b>	<b>Հավանական սխալը</b>
/oʊ/ "hope"	/ɔ/ "hop"
/θ/ "thick"	/t/ "tick"
/ð/ "then"	/d/ "den"
/tʃ/ "chin"	/ʃ/ "shin"

Վերոնշյալ սխալներից խուսափելու համար առաջարկում ենք, օրինակ, հետևյալ հնչյունաբանական վարժությունները.

- Նշված բառերի շարքից ընդգծեք ավելորդ բառը:
- Գտեք նշված բառին հնչողությամբ նման բառը:
- Կարդացեք բառերը (արտահայտությունները, նախադասությունները)՝ ուսուցչի կամ դասընկերոջ բերանի շարժումներին հետևելով:

Այսպիսով, անգլերենի՝ որպես 3-րդ օտար լեզվի ուսուցման գործընթացում հատուկ ուշադրություն պետք է դարձվի ճիշտ ընտրված վարժությունների կիրառմանը՝ նպատակաուղղված բացասական փոխներթափանցման «վտանգ» ենթադրող լեզվական երևույթների յուրացմանը և ամրապնդմանը, ինչն էլ կդառնա անգլերենի ուսուցման գործընթացի առավել հաջող կազմակերպման և հնարավորինս լավ արդյունքների ապահովման գրավական:



которые могут способствовать нежелательной интерференции в изучении английского языка после французского. Кроме того, приводятся образцы упражнений, которые можно использовать для развития лексических, грамматических и фонологических компетенций студентов при обучении английскому как третьему иностранному языку.

#### **SIRANUSH GHAZARYAN - USE OF EXERCISES IN TEACHING/LEARNING ENGLISH AS A THIRD FOREIGN LANGUAGE**

**Keywords:** *interference, comparison, partially overlapping language phenomena, language awareness skill, automation, language exercises*

The article touches upon the problems of teaching English as a third foreign language in higher educational institutions of the Republic of Armenia. The students' mother tongue, in this case, is Armenian. Russian is the first foreign language and French is the second one. Considering the fact that the students' 2<sup>nd</sup> (French) and 3<sup>rd</sup> (English) foreign languages have significant similarities that can cause both positive transfer and negative interference, the teaching/learning process of English should be organized by paying special attention to the similarities and taking into account certain peculiarities. Accordingly, the use of correctly selected exercises can help in organizing the teaching/learning process more quickly and effectively. The author also introduces some "dangerous" language phenomena that may bring about undesirable interference in learning English after French. In addition, a number of exercise samples are provided that might be used to develop the students' lexical, grammatical and phonological competences in teaching/learning English as a third foreign language.

**Ներկայացվել է՝ 22.04.2021**

**Գրախոսվել է՝ 20.04.2021**